# Նախագահական Ցաւակցութիւններ

## ՍՐՏԱՏՐՈՓ ՍՊԱՍՈՒՄ ԷԻՆՔ ԲԱՂՁԱԼԻ ՕՐՎԱՆ

Արցախյան ազգային-ազատագրական շարժմանը զուգընթաց՝ գնալով թեժացան հակառակորդի՝համարժեք՝ գործողությունները: Հաճախակի էին դառնում Աղդամում, Շուշիում, Ֆիզուլուում, Կիրովաբադում, Ղազախում, Լաչինում, Խոջալուում, Մալիբեկլուում հայկական ավտոմեքենաների քարկոծումներն ու ջարդերը: Ադրբեջանի իշխանությունների թողտվությամբ կատարվում էին աննախադեպ ոճրագործություններ՝ հայազգի բնակչության կոտորածներ ամենավայրագ եղանակներով:

Ստեփանակերտ քաղաքի տարբեր թաղամասերում ու մարզի գյուղերում ստեղծվում էին ինքնապաշտպանական խմբեր ու ջոկատներ, որոնք, գտնվելով ընդհատակում՝ համարժեք գործողություններով պատասխանում էին ազերիների նկրտումներին: Ահա այդ պայմաններում էլ որոշեցինք ստեղծել հատուկ դիվերսիոն խումբ, որի կորիզը դարձան զարմիկներիս զավակները, հարևաններս, դասընկերներս ու համախոհներս: Այսօր իմ նպատակից դուրս եմ համարում նկարագրել, թե խումբը հանդուգն դիվերսիոն ինչ գործողություններ է կատարել ազերիների թիկունքում. դա կարող է դիտվել որպես ինքնագովազդ, ինչից ես շատ հեռու եմ:

Իմ հրամանատարությամբ գործող այդ և հատուկ հարվածային զորախումբն իր մասնակցությունն է ունեցել հայոց բերդաքաղաքի ազատագրմանը:

1992թ. ապրիլ ամսից արդեն մեր զորախումբը գտնվում էր 26-րդ դիրքերում: Կրկժանի արևմտյան բարձունքներում, ուր ընթանում էին ակտիվ մարտական գործողություններ, հակառակորդը մեծ ուժեր էր տեղափոխել, և մեր բոլոր տղաները հերոսաբար դիմակայում էին նրանց գրոհներին, թիզ առ թիզ նվաճում բարձունքները: Մեր խմբի հետախույզները, որ թափանցել էին թշնամու թիկունքը, իրենց մարտական առաջադրանքը կատարելիս հայտնվեցին շրջափակման մեջ: Անհավասար մարտում զոհվեցին Մուրադ Մուսայելյանը, Սամվել Մարտիրոսյանը և Սերգեյ Ամյանը: Ռազմավարական մեծ նշանակություն ունեցող բարձունքը նվաճելիս ես վիրավորվեցի ոտքից:

Մենք արդեն նեղ շրջանակներում գիտեինք, որ Արկադի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս) կողմից մշակվում է Շուշիի ազատագրման ծրագիրը: Բոլորս սրտատրոփ սպասում էինք այդ բաղձալի օրվան և անհամբեր էինք դարձել, մի տեսակ շտապում էինք: Ստեփանակերտն անընդհատ հրետակոծվում և ռմբահարվում էր Շուշիից ու Ջանհասանից, փլվում էին տներ, զոհվում էին անմեղ մարդիկ: Այդ օրը գրոհում էինք հերթական բարձունքը՝ ճամփա բացելու դեպի Ջանհասան և արկակոծության էինք ենթարկում Կարագյավի ազերական դիրքերը, այդ ուղղությամբ հարձակման էին նախապատրաստվում մեր ինքնապաշտպանության ուժերը: Հանկարծ այդ վճռական պահին մեզ հրամայվեց փոխել հարձակման ուղղությունը:

Մեր ուրախությանը չափ ու սահման չկար: Վերջապես հասավ բաղձալի օրը: Եվ 1992թ. մայիսի 7-ին շտապ կարգով տեղափոխվեցինք Քարին տակ: Մեր զորախմբից մի ջոկատ էինք թողել նախկին դիրքում՝ թշնամու ուշադրությունը շեղելու նպատակով, որպեսզի շարունակվեին ինտենսիվ

գրոհները, և այդ ուղղությամբ Ջանհասանը գրավելու պատրանք ստեղծվեր: Ունեինք կոնկրետ առաջադրանք՝ փակել Նաբիլարից դուրս եկող միակ ճանապարհը, ուր կային թշնամու կենդանի ուժի և տեխնիկայի հսկայական կուտակումներ: Հետո մեզ պիտի միանար 700 հոգուց բաղկացած մի զորամիավորում, և գրոհելով անմատչելի մատույցները, պիտի ներխուժեինք Շուշիի ուղղությամբ: Մայիսի 8-ի գիշերը, լուսադեմից առաջ, արդեն կատարել էինք մեր առաջադրանքը, ոչնչացված էր Նաբիլարի հենակետը, փակված էր ճանապարհը, և Շուշիի հարավ-արևմտյան մատույցները մաքրված էին: Այդ օրն սպասվող զորամիավորումը չհայտնվեց, և մերոնք զբաղվում էին Կարագյավի դիրքերն հրետակոծելու գործողություններով, որպեսզի թշնամու շփոթությունն ավելի ահագնանա, ու մեր զորախմբերն անարգել կարողանան հասնել նախատեսված վայրերը և դիրքավորվել: Եվ ճիշտ այդպես էլ ստացվեց: Մայիսի լույս 9-ի գիշերը վերջապես հայտնվեց սպասվող զորամիավորումը, և հրետանային նախապատրաստությունից հետո սկսվեց գրոհը: Մենք գործում էինք մեկ մարդու նման, նույն հրահանգով, անսխալ: Հենց դա էր հաղթանակի գրավականը: Բոլորս տոգորված էինք հաղթանակի հավատով: Յուրաքանչյուր մարտիկ արցախցուն վայել խիզախությամբ, հերոսաբար մագլցում էր անմատչելի լերկ ժայռաժերպերը, թռչում անդունդների վրայով՝ վայրկյան առաջ ոտք դնելու հինավուրց Շուշիի սուրբ հողին: Կարծես թե Աստված միացել էր տղաների գրոհին և նրանց փեշերից բռնած, փրկում էր թշնամու գնդակների տարափից, ապահովում նվիրական հաղթանակը:
Ռազմագիտական այնպիսի խորությամբ էր կազմված ու մշակված Շուշիի ազատագրման պլանը, որ բոլոր զորամիավորումները տարբեր կողմերից միաժամանակ ներխուժեցին քաղաք: Մեր զորախումբը ( բաղկացած էր 54 հոգուց, 44-ը անմիջապես մասնակցել է քաղաքի վերանվաճմանը) ոչ մի վիրավոր ու զոհ չի ունեցել: Շուշին ազատագրելուց անմիջապես հետո ձևավորվեց Շուշիի գունդը, կամ 7-րդ պաշտպանական շրջանը, որի հիմքը հանդիսացավ մեր զորախումբը: Նրա առաջին և վերջին հրամանատարը եղա ես:
Շուշիի ազատագրման ռազմագործողությունը, իմ կարծիքով, ռազմագիտության մեջ հսկայական նշանակություն ունեցող երևույթ է:
Մեր նախկին գնդի զինվորներն իրենց արժանի խոսքն ասացին՝ Արցախյան գոյամարտի ընթացքում մեծ ներդրում ունենալով հաղթանակի կռման գործում: Մեր գնդի վետերանները Արցախի լավագույն պաշտպանների ու ամենափորձառու ազատամարտիկների շարքն են դասվում, և դա, հիրավի, այդպես է:

***Վաչագան ԻՇԽԱՆՅԱՆ***
***Շուշիի գնդի նախկին հրամանատար***

Կամշլի, 28.03.2013 թ.

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհրդի Նախագահ

**Արմենակ Աբրահամեան**

stat.gov.wa@haybachdban.org

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ